



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ  
ՔՆՆՈՂ ԱՆՁ**

ք. Երևան

11.03.2019թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի  
թիվ ԳԲՔԱ-ԱՄ-2019/17**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝  
ի դեմս Միեր Անանյանի

Մասնակցությամբ՝ Աշոտ Բաբիկի Հովհաննիսյանի ներկայացուցիչ՝

Գ. Գրիգորյանի (լիազորագիր, տրված՝ 06.02.2019թ.)

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝

Ա. Պողոսյանի (լիազորագիր, տրված՝ 11.02.2019թ.)

Գ. Հախինյանի (լիազորագիր, տրված՝ 11.02.2019թ.)

Քննելով «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի  
ծեռքբերման նպատակով հայտարարված «ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ-19/17» ծածկագրով  
էլեկտրոնային աճուրդի շրջանակներում Աշոտ Բաբիկի Հովհաննիսյանի կողմից

07.02.2019թ. ներկայացված և 07.02.2019թ. վարույթ ընդունված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԲԱ-ԱՄ-2019/17 բողոք), պարզեցի հետևյալը.

**1. Աշոտ Բաբիկի Հովհաննիսյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

Աշոտ Բաբիկի Հովհաննիսյանը (այսուհետ՝ Բողոքաբեր) 07.02.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու) բժշկական պարագաների ձեռքներման նպատակով հայտարարել է «ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ-19/17» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ՝ Աճուրդ):

Գնահատող հանձնաժողովը 31.01.2019թ. թիվ 1 որոշմամբ հաստատել և հրապարակել է հրավերի տեքստը:

Հրավերում առկա տեխնիկական բնութագրի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այն կազմված է խտրական և նպատակ է հետապնդում արհեստականորեն սահմանափակել հնարավոր այլ մասնակիցների մասնակցությունը և բացառել մրցակցությունը:

Բողոքաբերը վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասը, որի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Գնահատող հանձնաժողովի կողմից հաստատված տեխնիկական բնութագիրը կազմված է խտրականության սկզբունքով, ինչի առկայության պայմաններում, սահմանափակվում է այլ մասնակիցների հնարավոր մասնակցությունը: Մասնավորապես չափաբաժին N 1-ում ուղղակի հղում է կատարված կոնկրետ մոդելին և առանց նշելու «կամ համարժեք» բառերը:

Ուղղակի հղում է կատարված նաև մանրէազերծման մեթոդի մասով նշելով «մանրէազերծման մեթոդը INLINE շոգով»: Ընդ որում «INLINE» տերմինը հանդիսանում է միայն «Fresenius Medical Care GmbH» կողմից կիրառվող տերմին՝ ավտոկլավի միջոցով դիալիզատորների մանրէազերծման մեթոդը նկարագրելու համար: Բացի այդ, ավտոկլավով մանրէազերծված դիալիզատորները համարժեք են ռադիացիոն մեթոդով մանրէազերծված դիալիզատորների հետ, դրա մասին է վկայում նաև մի շարք փորձագիտական խմբերի, մասնագիտացված բժշկական կենտրոնների, կլինիկաների ներգրավմամբ իրականացված վերլուծությունը, որը Բողոքաբերը կարող է տրամադրել ըստ անհրաժեշտության:

Արդյունքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները:

Բողոքաբերը խնդրել է պարտավորեցնել գնահատող՝ հանձնաժողովին փոփոխել տեխնիկական բնութագիրը՝ դիալիզատորի անվանումից հետո նշել «կամ համարժեք» բառերը, մանրէազերծման մեթոդը նշել շոգով կամ ավտոկլավի միջոցով:

Ի լրումն բողոքի Բողոքաբերը 08.02.2019թ. ներկայացրած գրությամբ հայտնել է հետևյալը.

Գնահատող հանձնաժողովի կողմից հաստատված տեխնիկական բնութագիր կազմված է խտրականության սկզբունքով, ինչի առկայության պայմաններում, սահմանափակվում է այլ մասնակիցների հնարավոր մասնակցությունը: Մասնավորապես՝ չափաբաժին N°1-ում ուղղակի հղում է կատարված կոնկրետ մոդելին և առանց նշելու կամ համարժեք բառերը:

Նույն չափաբաժնում ուղղակի հղում է կատարված նաև մանրէազերծման մեթոդի մասով՝ նշելով «մանրէազերծման մեթոդը INLINE շոգով»: Ընդ որում «INLINE» տերմինը հանդիսանում է միայն «Fresenius Medical Care GmbH» կողմից կիրառվող տերմին՝ ավտոկլավի միջոցով դիալիզատորների մանրէազերծման մեթոդը նկարագրելու համար: Բացի այդ, ավտոկլավով մանրէազերծված դիալիզատորները համարժեք են ռադիացիոն մեթոդով մանրէազերծված դիալիզատորների հետ դրա մասին է վկայում նաև մի շարք փորձագիտական խմբերի, մասնագիտացված բժշկական կենտրոնների, կլինիկաների ներգրավմամբ իրականացված վերլուծությունը, որը կարող են տրամադրել ըստ անհրաժեշտության: Տվյալ պարագայում մանրէազերծման մեթոդի վերաբերյալ

տեխնիկական բնութագրում պետք է նախատեսվեր և՛ ավտոկլավով և՛ ռադիացիոն եղանակով, որով հնարավորություն կընձեռվի առավել ընդլայնել մրցակիցների շրջանակը:

Նույն չափաբաժնում ուղիղ հղում է կատարված թաղանթի նյութի տեսակի վրա՝ polysulfone, որն իրենից ներկայացնում է սինթետիկ տիպի նյութ, մինչդեռ աշխարհում առկա են հանրահայտ ու մեծ շուկաներ գրաված բազմաթիվ այլ եվրոպական, ամերիկյան ու ճապոնական արտադրողներ, ովքեր նույնպես արտադրում են սինթետիկ նյութից պատրաստված թաղանթով դիալիզատորներ, օրինակ պոլիմեթիլմետակրիլատից, պոլիէթերսուլֆոնից, պոլիակրիլնիտրիտից: Հաշվի առնելով վերոգրյալը Բողոքաբերը գտնում է, որ տեխնիկական բնութագիրն այդ մասով պետք է պարունակի միայն նյութը՝ սինթետիկ:

Նույն չափաբաժնում գերզտման գործակիցը նշված է առանց շեղումների, մասնավորապես գրված է 13 մլ/ժամ-մմ Hg, մինչդեռ շուկայում առկա են բազմաթիվ հանրահայտ արտադրողներ, ովքեր արտադրում են ցածր հոսքային դիալիզատորներ, որոնց գերզտման գործակիցները գտնվում են ցածր հոսքային համարվող դիալիզատորների միջակայքում, օրինակ 10, 12, 16, 18 կամ 20 մլ/ժամ-մմ Hg և քանի որ մինչև 20 մլ/ժամ-մմ Hg գերզտման գործակցով դիալիզատորները համարվում են ցածր հոսքային, ուստի տեխնիկական բնութագրում պետք է նշվեր կոնկրետ միջակայք՝ 10-20 մլ/ժամ-մմ Hg, ինչը ևս կխթանի մասնակցության ընդլայնումը:

Նույն չափաբաժնում լցման ծավալը նշված է առանց շեղումների, մասնավորապես գրված է 78 մլ, մինչդեռ շուկայում առկա են բազմաթիվ հանրահայտ արտադրողներ, ովքեր արտադրում են դիալիզատորներ, որոնց լցման ծավալները օրինակ 75մլ է կամ 90մլ և քանի որ մինչև 100մլ լցման ծավալով բոլոր դիալիզատորները համարվում են համարժեք, ուստի տեխնիկական բնութագիրը ևս պետք է նախատեսի կոնկրետ միջակայք՝ առավելագույնը՝ 100մլ:

Չափաբաժին №2-ում սահմանված խտրական պահանջները նույնատիպ են Չափաբաժին №1-ում:

Չափաբաժին №5-ում ուղղակի հղում է կատարված արյան հոսքային գծերի մոդելի վրա առանց նշելու «կամ համարժեք» բառերը:

Նույն չափաբաժնում ուղղակի հղում է կատարված մանրէագերծման մեթոդի վրա հետևյալ կերպ՝ «մանրէագերծման մեթոդը բետա-մանրէագերծում, արագացված էլեկտրոններով մանրէագերծում (e-beam)»: Նշված պահանջը խտրական է, քանի որ սահմանափակում է ռադիացիոն ճառագայթման մյուս մեթոդներով մանրէագերծված արյան հոսքագծեր արտադրող ընկերությունների մասնակցությունը, օրինակ գամմա ճառագայթմամբ, ընդ որում բետտա և գամմա ճառագայթմամբ մանրէագերծված արյան հոսքագծերը համարվում են համարժեք: Հաշվի առնելով այդ հանգամանքը տեխնիկական բնութագիրն օբյեկտիվորեն պետք է նախատեսեր ինչպես բետտա, այնպես էլ գամմա ճառագայթմամբ մանրէագերծված մեթոդներ:

Նույն չափաբաժնում լցման ծավալը նշված է առանց շեղումների, մասնավորապես գրված է 161մլ, ինչը խտրական պահանջ է, քանի որ շուկայում առկա են բազմաթիվ հանրահայտ արտադրողներ, ովքեր արտադրում են 170մլ կամ 190մլ լցման ծավալով փոխադարձ փոխարինելի (համարժեք) արյան հոսքագծեր, սակայն չեն կարող մասնակցել մրցույթին վերոնշյալ պատճառով: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ տեխնիկական բնութագիրը պետք է նախատեսի մինչև 20 տոկոսի շեղման միջակայք:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին:

Առկա տեխնիկական բնութագրի պայմաններում ի չիք են դառնում նշված իրավական ակտերի պահանջները, խիստ սահմանափակվում է հնարավոր մասնակիցների մասնակցությունը և անհնարին է դառնում հավասար պայմաններում արդար մրցակցության առկայությամբ գնում կազմակերպելու հնարավորությունը:

Բողոքաբերը բողոքով խնդրել է՝

1. Պարտավորեցնել Աճուրդի գնահատող հանձնաժողովին՝ փոփոխել տեխնիկական բնութագիրը և 1-ին չափաբաժնում դիալիզատորի մոդելի անվանումից հետո նշել «կամ համարժեք» բառերը:

2. Պարտավորեցնել Աճուրդի գնահատող հանձնաժողովին՝ փոփոխել տեխնիկական բնութագիրը և 1-ին չափաբաժնում մանրէազերծման մեթոդը նշել ավտոկլավի կամ ռադիացիոն մեթոդի միջոցով, բացառությամբ էթիլեն օքսիդով մանրէազերծված դիալիզատորների:

3. Պարտավորեցնել Աճուրդի գնահատող հանձնաժողովին՝ փոփոխել տեխնիկական բնութագիրը և 1-ին չափաբաժնում թաղանթի տեսակը նշել՝ սինթետիկ:

4. Պարտավորեցնել Աճուրդի գնահատող հանձնաժողովին՝ փոփոխել տեխնիկական բնութագիրը և 1-ին չափաբաժնում գերզտման գործակիցը սահմանել 10-20 մլ/ժամ-մմ Hg:

5. Պարտավորեցնել Աճուրդի գնահատող հանձնաժողովին՝ փոփոխել տեխնիկական բնութագիրը և 1-ին չափաբաժնում լցման ծավալը սահմանել մինչև 100 մլ:

6. Պարտավորեցնել Աճուրդի գնահատող հանձնաժողովին՝ փոփոխել տեխնիկական բնութագիրը և 2-րդ չափաբաժնում դիալիզատորի մոդելի անվանումից հետո նշել «կամ համարժեք» բառերը:

7. Պարտավորեցնել Աճուրդի գնահատող հանձնաժողովին՝ փոփոխել տեխնիկական բնութագիրը և 2-րդ չափաբաժնում մանրէազերծման մեթոդը նշել ավտոկլավի կամ ռադիացիոն մեթոդի միջոցով, բացառությամբ էթիլեն օքսիդով մանրէազերծված դիալիզատորների.

8. Պարտավորեցնել Աճուրդի գնահատող հանձնաժողովին՝ փոփոխել տեխնիկական բնութագիրը և 2-րդ չափաբաժնում թաղանթի տեսակը նշել՝ սինթետիկ/.

9. Պարտավորեցնել Աճուրդի գնահատող հանձնաժողովին՝ փոփոխել տեխնիկական բնութագիրը և 2-րդ չափաբաժնում գերզտման գործակիցը սահմանել 10-20 մլ/ժամ-մմ Hg.

10. Պարտավորեցնել Աճուրդի գնահատող հանձնաժողովին՝ փոփոխել տեխնիկական բնութագիրը և 2-րդ չափաբաժնում լցման ծավալը սահմանել մինչև 100 մլ.

11. Պարտավորեցնել Աճուրդի գնահատող հանձնաժողովին՝ փոփոխել տեխնիկական բնութագիրը և 5-րդ չափաբաժնում արյան հոսքային գծերի մոդելի անվանումից հետո նշել «կամ համարժեք» բառերը.

12. Պարտավորեցնել Աճուրդի գնահատող հանձնաժողովին՝ փոփոխել տեխնիկական բնութագիրը և 5-րդ չափաբաժնում մանրէազերծման մեթոդը նշել բետտա և գամմա ճառագայթամբ.

13. Պարտավորեցնել Աճուրդի գնահատող հանձնաժողովին՝ փոփոխել տեխնիկական բնութագիրը և 5-րդ չափաբաժնում լցման ծավալը սահմանել 161 մլ +/-20 տոկոս:

Աշոտ Բաբիկի Հովհաննիսյանը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 11.02.2019թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

Բողոքաբերը «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշման վերաբերյալ 25.02.2019թ. գրությամբ հայտնել է հենկյալը.

Պատվիրատուն նշում է, որ «INLINE» տերմինն օգտագործվում է մի շարք դիալիզատորներ արտադրող ընկերությունների կողմից, մինչդեռ Պատվիրատուի կողմից ներկայացրած տեղեկություններն իրականությանը չեն համապատասխանում, քանի որ նշված կազմակերպություններից և ոչ մեկ «INLINE» շոգի միջոցով և տեխնիկական բնութագրով նշված պարամետրերով դիալիզատոր չի արտադրում:

Գերզտման գործակցի մասով՝ Պատվիրատուն մասնակի ընդունում է, որ տեխնիկական բնութագրում նշված կոնկրետ նիշն առանց միջակայքի սահմանման խտրական է այդ իսկ պատճառով պատրաստականություն է հայտնում սահմանել միջակայք 10+-50%: Դա ևս դիտավորություն է և հետապնդում է հետին նպատակներ հնարավոր մասնակիցների մասնակցությունը բացառելու համար: Եթե Պատվիրատուն ընդունում է, որ իրականում առկա է խտրականություն իր կողմից հրապարակված տեխնիկական բնութագրում, ապա ինչու է նվազագույն շեմն ընդունում 10 և դրա նկատմամբ կիրառում շեղման գործակից: Բողոքում մանրամասն է նշված է, որ ցածր զտման գործակիցը համաշխարհային առաջատար արտադրողների կողմից ընդունված է համարել համարժեք 10-ից մինչև 20-ը: Բացի այդ բողոքով պահանջվել է պարտավորեցնել գնահատող հանձնաժողովին սահմանել կոնկրետ միջակայք, 10-20, այլ ոչ թե կիրառել գործակից: Եթե Պատվիրատուն ընդունում է, որ պետք է կիրառել գործակից, ապա ինչով է պայմանավորված վերջինիս հրաժարվելը տեխնիկական բնութագրում նշված 13 (1-ին չափաբաժնում) և 16 (2-րդ չափաբաժնում) մ/ժ-մ/ցի պահանջից: Այստեղ ևս Պատվիրատուի արդարացումները հիմնավորված չեն, քանի որ վերջինս ամեն կերպ փորձում է կայանալիք ընթացակարգում առաջին տեղ ապահովել իր կողմից նախընտրելի մասնակցին: Եթե ուսումնասիրենք Պատվիրատուի կողմից վերջին 5 տարիներին նույն ապրանքի մասով հայտարարված ընթացակարգերը, ապա կարելի է համոզվել, որ նույն տեխնիկական բնութագրի առկայության պայմաններում միշտ մասնակցության հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից:

Թաղանթի նյութի մասով՝ Պատվիրատուի փաստարկները թաղանթի նյութի մասով անհիմն ու անտրամաբանական են և զուրկ են որևէ հիմնավորումից, քանի որ բողոքում նշվել է, որ տեխնիկական բնութագրում չպետք է նշվի նյութի տեսակը, այլ ընդամենը պետք է նշվի նյութի անվանումը, իսկ եթե Պատվիրատուն նշում է նաև կոնկրետ նյութի տեսակը, ապա պարտավոր է նշել նաև (կամ համարժեք) բառերը:

Մանրէագերծման մեթոդի մասով նույնպես Պատվիրատուի փաստարկներն առարկայազուրկ են և չեն բխում գնման պահանջից, այլ նպատակ են հետապնդում այլ հնարավոր մասնակիցների մասնակցությունը սահմանափակել: Բողոքում նշվել է, որ սույն պահանջը խտրական է, քանի որ սահմանափակում է ռադիացիոն ճառագայթման մյուս



մեթոդներով մանրէազերծված արյան հոսքագծեր արտադրող ընկերությունների մասնակցությունը, օրինակ գամմա ճառագայտմամբ, ընդ որում բետտա և գամմա ճառագայթմամբ մանրէազերծված արյան հոսքագծերը համարվում են համարժեք: Հաշվի առնելով այդ հանգամանքը, տեխնիկական բնութագիրն օբյեկտիվորեն պետք է նախատեսեր ինչպես բետտա, այնպես էլ գամմա ճառագայթմամբ մանրէազերծման մեթոդներ:

Անդրադառնալով Պատվիրատուի այն փաստարկներին, որ բողոքում նշված տեխնիկական բնութագրով դիալիզատորների կիրառումը վտանգ է ներկայանում և կարող է պատճառ դառնալ հիվանդի առողջական վիճակի վատթարացման համար, ապա դա մերկապարանոց հայտարարություն է, և Պատվիրատուն կասկածի տակ է դնում այն բժշկական հաստատությունների հեղինակությունն ու բարի համբավը, որոնք այլ տեխնիկական բնութագրերով են հայտարարում իրենց ընթացակարգերը: Անտրամաքանական է նաև Պատվիրատուի այն փաստարկը, որ այլ դիալիզատորների կիրառման արդյունքում կարող են հիվանդանոցում առկա սարքերի խոտանման պատճառ դառնալ: Դա պատվիրատուին որևէ իրավասություն չի տալիս խտրական տեխնիկական բնութագիր կազմելու և հրապարակելու համար:

Բողոքաբերը կրկին պնդել է բողոքը և խնդրել այն բավարարել:

## **2. «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.**

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու) 14.02.2019թ. թիվ 1784 գրությամբ հայտնել է, որ Բողոքաբերի կողմից ներկայացված այն պնդումը, որ վերը նշված ընթացակարգի հրավերում /այսուհետ՝ հրավեր/ առկա տեխնիկական բնութագրերը խտրական են և արհեստականորեն սահմանափակում են հնարավոր այլ մասնակիցների մասնակցությունը և բացառում մրցակցությունը չեն համապատասխանում իրականությանը: Մասնավորապես՝

1. Բողոքաբերը նշում է, որ հրավերի N 1 չափաբաժնում ուղիղ հղում է կատարված մանրէազերծման մեթոդին, այն է՝ «մանրէազերծման մեթոդը INLINE շոգով» և որ «INLINE»

տերմինը հանդիսանում է Fresenius Medical GmbH-ի կողմից կիրառվող տերմին՝ ավտոկլավի միջոցով դիալիզատորների մանրէազերծման մեթոդը նկարագրելու համար: Վերը նշված պնդման մասով Պատվիրատուն հայտնել է, որ «INLINE շոգով» տերմինը հանդիսանում է միջազգային ընդունված տերմին և կիրառվում է նմանատիպ արտադրանքներ թողարկող բազմաթիվ ընկերությունների կողմից և նկարագրում է մանրէազերծման մեթոդը: Շոգով մանրէազերծումը աշխարհում համարվում է ամենաանվնաս և բարձրակարգ հեմոդիալիզատորների մասով որակ ապահովող մեթոդ: Անհրաժեշտ է նշել, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների: Ինչպես երևում է վերը նշված իրավանորմի վերլուծությունից, գնման առարկայի հատկանիշները նկարագրելիս պետք է հղում կատարել պայմանական նշաններին, տերմինաբանությանը և այլն: Տվյալ պարագայում պարզապես կիրառվել է տերմինաբանություն, որը նկարագրում է մանրէազերծման մեթոդը և դա բացարձակապես օրենքի սահմաններում է: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնման առարկայի բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը: Տվյալ պարագայում վերը նշված մեթոդի ընտրությունը հիմնավորված է այն օբյեկտիվ պատճառներով, որ տվյալ մեթոդը ամենաանվնասն է առկա բոլոր մեթոդներից և առավել համատեղելին է բժշկական կենտրոնում առկա սարքավորումների հետ: Մանրէազերծումների մեթոդներից շոգով մանրէազերծումը համարվում է անվնաս բետտա և գամմա ճառագայթներով մանրէազերծման համեմատ, քանի որ վերջիններիս մանրէազերծմամբ առաջանում է հեմոդիալիզատորի թաղանթի մեմբրանային քիմիական բաղադրության փոփոխություններ ինչպես նաև փոխվում է ֆիլտրի թափանցելիությունը և պարամետրերը: Դա պայմանավորված է գամմա և առավել ևս բետտա ճառագայթման

մեծ էներգիայով, երկրորդային-երրորդային էլեկտրոնների առաջացմամբ, իոնիզացնող ճառագայթների առաջացմամբ, ինչի արդյունքում օրգանիզմից հեմոդիալիզի ընթացքում դուրս են մղվում նաև օրգանիզմին պիտանի նյութերը (վիտամիններ, սպիտակուցների որոշակի ֆրակցիաներ և այլն), որոնք չեն հասցնում վերականգնվել մինչև հաջորդ սեանսի ընդունումը: Այս երևույթները աստիճանաբար վատացնում են հիվանդի վիճակը: Նաև Տվյալ մեթոդի նշումը բացարձակապես չի սահմանափակում հնարավոր մասնակիցների մասնակցությունը, քանի որ տվյալ մեթոդով ապրանքատեսակներ են արտադրում բազմաթիվ ընկերություններ՝ «Gambro», «Belico», «Renal Systems», «Nephro system», «Schiva», «Saxonia», «Terumo», «Nikkiso», «Riggers», «Gross-O-Pharm» և այլն: Ուստի, տվյալ պարագայում պահպանված է նաև ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 22-րդ կետի պահանջները, որով սահմանված է, որ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:

2. Բողոքաբերը նշում է, որ N 1 չափաբաժնում ուղիղ հղում է կատարված թաղանթի նյութի տեսակի վրա, ցերզոման գործակիցը նշված է առանց շեղումների, լցման ծավալը նշված է առանց շեղումների, N 5 չափաբաժնում հղում է կատարված մանրէազերծման մեթոդի վրա, նշելով բետա-մանրէազերծում, արագացված էլեկտրոններով մանրէազերծում, և որ կան շատ այլ արտադրողներ, որոնք, օրինակ, արտադրում են դիալիզատորներ պատրաստված այլ սինթետիկ տեսակի թաղանթից, կամ կան այլ արտադրողներ, որոնք արտադրում են ցերզոման այլ գործակիցներով դիալիզատորներ և այլն: Վերը նշված պնդումներին ի հակադարձում Պատվիրատուն նշել է, որ անհրաժեշտ է հաշվի առնել գնման առարկայի հակտանիշների կոնկրետ սահմանման պատճառները, մասնավորապես՝

3. ա) այդ կան այլ արտադրողներ, որոնք թաղանթի նյութի համար օգտագործում են այլ սինթետիկ նյութեր, բայց դրանցից լավագույնը ներկայումս համարվում է polysulfone-

ը, ի հավաստում ինչի Պատվիրատուի կողմից կարող են ներկայացվել բազմաթիվ փաստարկներ՝ վերլուծությունների և փորձարկումների տեսքով: Polysulfone նշելը բացարձակապես չի սահմանափակում հնարավոր մասնակիցների մասնակցությունը, քանի որ տվյալ նյութով ապրանքատեսակներ են արտադրում բազմաթիվ ընկերություններ՝ «Fresenius», «Belico», «Renal Systems», «B.Braun», «Hospal», «Baxter», «Asahi», «Cobe», «Helbio», «Idemsa» և այլն:

բ) գերզտման գործակցի կոնկրետ սահմանումը ևս ունի իր թե՛ բժշկական, թե՛ որակական հիմնավորումները, տվյալ չափանիշի մասով մասնագետների հետ խորհրդակցելուց հետո Պատվիրատուն եկել է այն եզրահանգման, որ կարելի է սահմանել որոշակի միջակայք, տվյալ չափանիշի մասով Պատվիրատուն պատրաստակամ է սահմանել հետևյալ միջակայքը՝ 1-ին չափաբաժնի մասով՝  $10 \pm 50\%$  ( $5-15$ ) մլ/ժամ-մմ Hg, 2-րդ չափաբաժնի մասով՝  $12 \pm 50\%$  ( $6-18$ ) մլ/ժամ-մմ Hg.

գ) նույն տրամաբանությամբ Պատվիրատուն պատրաստակամ է լցման ծավալի չափանիշը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով սահմանել մինչև 100մլ, 5-րդ չափաբաժնի մասով՝  $161 \pm 10\%$ , առավել մեծ միջակայքի սահմանումը Պատվիրատուի մասնագետների կողմից տրված եզրակացության համաձայն հնարավոր չէ՝ առանց հիվանդի առողջությանը վնաս հասցնելու.

դ) N 5 չափաբաժնում նշված «բետա-մանրէագերծում, արագացված էլեկտրոններով» մեթոդը ներկայումս ամենաառաջադեմն է այն ունի առավել քիչ թափանցելիություն և նեյտրալ է պոլիմերների նկատմամբ: Քանի որ արյան հոսքային գծերի դեպքում գործ ունենք մակերեսի հետ, այս մեթոդը ապահովում է նվազագույն ազդեցություն նյութի նկատմամբ, այս մեթոդը կիրառվում է առաջադեմ արտադրողների մեծ մասի կողմից: Գամմա ճառագայթման մեթոդը ունենալով մեծ թափանցելիություն առավել շատ է վնասում նյութը ու շատ ավելի քիչ արտադրողների կողմից է կիրառվում: Ու կրկին պետք է ընդունել, որ սա ընդամենը մեթոդի կիրառում է, այն չի պարտադրում որպեսզի գնման առարկան լինի արտադրված կոնկրետ ընկերության կողմից և այն հանգամանքը, որ որոշ արտադրողներ այս մեթոդը չեն կիրառում դեռևս չի նշանակում, որ այս մեթոդի նշումը հանդիսանում է խտրական պայման, չէ որ բոլոր արտադրողները միանման արտադրանք չէ որ արտադրում են: Ելնելով վերոգրյալից և բժշկական կենտրոնի հիվանդներին

հնարավորինս բարձր որակի ծառայությունների մատուցման սկզբունքից Պատվիրատուն նպատակահարմար չի գտնում տվյալ չափանիշի վերանայումը:

Պատվիրատուի կողմից նշված բոլոր չափանիշները հնարավորություն են տալիս վերը նշված ընթացակարգի հնարավոր մասնակիցներին ներկայացնելու տարատեսակ արտադրողների արտադրանքներ և այդ չափանիշների սահմանումը չի պարտադրում կոնկրետ արտադրողի ապրանքատեսակի ներկայացում:

Եվ վերջապես պետք է հաշվի առնել ձեռքբերվող արտադրանքի յուրահատկությունը և դրանց կիրառման ոլորտը: Նման արտադրանք ձեռք բերելիս չի կարելի սահմանել այնպիսի լայն և ոչ կոնկրետ չափանիշներ ունեցող տեխնիկական բնութագրեր, որոնց պարագայում ցանկացած, թեկուզև ոչ որակյալ արտադրանք թողարկող արտադրող կարողանա առաջարկել իր արտադրանքը: Տվյալ պարագայում ոչ որակյալ ապրանքը կարող է հանգեցնել հիվանդի վիճակի կտրուկ վատացման հետագա անդառնալի հետևանքներով կամ ոչ որակյալ արտադրանքը կարող է հանգեցնել բժշկական կենտրոնում առկա բազմամիլիոնանոց սարքավորումների խոտանմանը և դրանց երաշխիքային սպասարկման դադարեցմանը: Բացի այդ նման չափանիշների սահմանումը չի խախտում գնումների օրենսդրության որևէ պահանջ և պայմանավորված է բացառապես պատվիրատուի կարիքների համար համարժեք ապրանքի ձեռքբերմամբ:

Ելնելով վերոգրյալից Պատվիրատուն խնդրել է չբավարարել Աշոտ Բաբիկի Հովհաննիսյանի կողմից ներկայացված բողոքը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 11.02.2019թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը:

### **3. ԳԲՔԱ-ԱՄ-2019/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

ԳԲՔԱ-ԱՄ-2019/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ-19/17» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ:

2. Աճուրդի 1-ին, 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով նախատեսվել են հետևյալ տեխնիկական բնութագրերը.

1	դիալիզի գտիչներ (գտիչներ)	Դիալիզորդ, ցածր թափանցելիությամբ /հեմոդիալիզատոր/ <b>F 6 HPS</b> Գերզտման գործակիցը՝ <b>13 մլ/ժամ-մմ Hg</b> ; թաղանթի նյութը <b>polysulfone</b> ; արդյունավետ մակերեսը 1,3(+/- 0.1) մ <sup>2</sup> ; թաղանթի հաստությունը 30-40 մկ, ներքին տրամաչափը 200մկ; <b>լցման ծավալը 78 մլ</b> ; պատյանի նյութերը պոլիկարբոնատ; կողմնային լիցքի նյութը պոլիուրետան, <b>մանրէազերծման մեթոդը INLINE շոգով</b> : Գործող՝ Fresenius Medical Care 4008S սարքին համապատասխան Որակի սերտիֆիկատների առկայություն
2	դիալիզի գտիչներ (գտիչներ)	Դիալիզորդ, ցածր թափանցելիությամբ /հեմոդիալիզատոր/ <b>F 7 HPS</b> Գերզտման գործակիցը՝ <b>16 մլ/ժամ-մմ Hg</b> ; թաղանթի նյութը <b>polysulfone</b> ; արդյունավետ մակերեսը 1,6(+/- 0.1) մ <sup>2</sup> ; թաղանթի հաստությունը 30-40 մկ, ներքին տրամաչափը 200մկ; <b>լցման ծավալը 96 մլ</b> ; պատյանի նյութերը պոլիկարբոնատ; կողմնային լիցքի նյութը պոլիուրետան, <b>մանրէազերծման մեթոդը INLINE շոգով</b> : Գործող՝ Fresenius Medical Care 4008S սարքին համապատասխան Որակի սերտիֆիկատների առկայություն
5	երիկամային դիալիզի համար նախատեսված սպառման առարկաներ	Արյան հոսքային գծեր՝ արյունատար մագիստրալներ (զարկերակ-անոթ լրակազմ) <b>AV-Set-FMC-(FA 204c/FV 204 c)</b> : Պոմպային հատվածի ներքին տրամագիծ 8 մմ; երակային օդաձուլակի տրամագիծ 22 մմ; <b>լցման ծավալը 161 մլ</b> ; <b>մանրէազերծման մեթոդը՝ բեղա-մանրէազերծում, արագացված էլեկտրոններով մանրէազերծում (e-beam)</b> Չպետք է պարունակի լատեքս: Չպետք է պարունակի ֆտալտ Գործող Fresenius Medical Care 4008S սարքին համապատասխան Որակի սերտիֆիկատների առկայություն

**4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մհեր Անանյանս, ուսումնասիրելով Աշոտ Բաբիկի Հովհաննիսյանի կողմից 07.02.2019թ. ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ-19/17» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը, «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 14.02.2019թ. թիվ 1784 գրությունը, հայտնում են հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին,

ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառույթային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

**5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:**

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:

Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ-19/17» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ:

Աճուրդի 1-ին, 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով նախատեսվել են հետևյալ տեխնիկական բնութագրերը.

1	դիալիզի գտիչներ (գտիչներ)	Դիալիզորդ, ցածր թափանցելիությամբ /հեմոդիալիզատոր/ <b>F 6 HPS</b> Գերզտման գործակիցը՝ <b>13 մլ/ժամ-մմ Hg</b> ; թաղանթի նյութը <b>polysulfone</b> :
---	---------------------------	--



		արդյունավետ մակերեսը 1,3(+/- 0.1) մ <sup>2</sup> ; թաղանթի հաստությունը 30-40 մկ, ներքին տրամաչափը 200մկ; <b>լցման ծավալը 78 մլ</b> ; պատյանի նյութերը պոլիկարբոնատ; կողմնային լիցքի նյութը պոլիուրետան, <b>մանրէազերծման մեթոդը INLINE շոգով</b> : Գործող՝ Fresenius Medical Care 4008S սարքին համապատասխան Որակի սերտիֆիկատների առկայություն
2	դիալիզի գոտիներ (գոտիներ)	Դիալիզորդ, ցածր թափանցելիությամբ /հեմոդիալիզատոր/ <b>F 7 HPS</b> Գերզտման գործակիցը՝ <b>16 մլ/ժամ-մմ Hg</b> ; թաղանթի նյութը <b>polysulfone</b> ; արդյունավետ մակերեսը 1,6(+/- 0.1 մ <sup>2</sup> ; թաղանթի հաստությունը 30-40 մկ, ներքին տրամաչափը 200մկ; <b>լցման ծավալը 96 մլ</b> ; պատյանի նյութերը պոլիկարբոնատ; կողմնային լիցքի նյութը պոլիուրետան, <b>մանրէազերծման մեթոդը INLINE շոգով</b> : Գործող՝ Fresenius Medical Care 4008S սարքին համապատասխան Որակի սերտիֆիկատների առկայություն
5	երիկամային դիալիզի համար նախատեսված սպառման առարկաներ	Արյան հոսքային գծեր՝ արյունատար մագիստրալներ (զարկերակ-անոթ լրակազմ) <b>AV-Set-FMC-(FA 204c/FV 204 c)</b> : Պոմպային հատվածի ներքին տրամագիծ 8 մմ; երակային օդաձուլակի տրամագիծ 22 մմ; <b>լցման ծավալը 161 մլ</b> ; <b>մանրէազերծման մեթոդը՝ բեյրա-մանրէազերծում, արագացված էլեկտրոններով մանրէազերծում (e-beam)</b> Չպետք է պարունակի լատեքս: Չպետք է պարունակի ֆտալտ Գործող Fresenius Medical Care 4008S սարքին համապատասխան Որակի սերտիֆիկատների առկայություն

Ուսումնասիրելով վերոհիշյալ չափաբաժիններով տեխնիկական բնութագրերը, արձանագրում են, որ 1-ին, 2-րդ և 5-րդ չափաբաժիններում ուղղակի հղում է կատարվել դիալիզի գոտիների և երիկամային դիալիզի համար նախատեսված սպառման առարկաների մոդելներին. մասնավորապես՝ նախատեսվել է «F 6 HPS», «F 7 HPS» և «AV-Set-FMC-(FA 204c/FV 204 c)»: Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը: Տվյալ դեպքում նշված չափաբաժինների տեխնիկական բնութագրերը պետք է պարունակեն «կամ համարժեք» բառերը:

Աճուրդի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով գերզտման գործակիցը սահմանվել է համապատասխաբար 13 մլ/ժամ-մմ Hg և 16 մլ/ժամ-մմ Hg:

Բողոքաբերը հայտնել է, որ գերզտման գործակիցը նշված է առանց շեղումների, մինչդեռ շուկայում առկա են բազմաթիվ հանրահայտ արտադրողներ, ովքեր արտադրում են ցածր հոսքային դիալիզատորներ, որոնց գերզտման գործակիցները գտնվում են ցածր հոսքային համարվող դիալիզատորների միջակայքում, օրինակ 10, 12, 16, 18 կամ 20 մլ/ժամ-մմ Hg և քանի որ մինչև 20 մլ/ժամ-մմ Hg գերզտման գործակցով դիալիզատորները

համարվում են ցածր հոսքային, ուստի տեխնիկական բնութագրում պետք է նշվեր կոնկրետ միջակայք՝ 10-20 մլ/ժամ-մմ Hg, ինչը ևս կխթանի մասնակցության ընդլայնումը:

Այս տեսանկյունից անհրաժեշտ է նշել, որ գերզտման գործակիցը առանց շեղումների նշելը կարող է հանգեցնել Աճուրդի մասնակիցների թվի սահմանափակման, ուստի անհրաժեշտ է նախատեսել համապատասխան միջակայք: Այս առումով «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն 14.02.2019թ. թիվ 1784 գրությամբ հայտնել է, որ պատրաստակամ է գերզտման գործակցի համար նախատեսել համապատասխան միջակայք, մասնավորապես՝ 1-ին չափաբաժնի մասով՝ գերզտման գործակիցը սահմանել 10  $\pm$  50% (5-:-15) մլ/ժամ-մմ Hg, 2-րդ չափաբաժնի մասով՝ 12  $\pm$  50% (6-:-18) մլ/ժամ-մմ Hg:

Տեխնիկական բնութագրով 1-ին չափաբաժնի մասով լցման ծավալը սահմանվել է 78 մլ, 2-րդ չափաբաժնի մասով՝ լցման ծավալը 96 մլ, 5-րդ չափաբաժնի մասով՝ լցման ծավալը 161 մլ:

Այս տեսանկյունից Պատվիրատուն հայտնել է, որ պատրաստակամ է լցման ծավալի չափանիշը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով սահմանել մինչև 100մլ, ինչպես պահանջել է բողոքաբերը և 5-րդ չափաբաժնի մասով՝ 161 մլ  $\pm$  10%, իսկ առավել մեծ միջակայքի սահմանումը Պատվիրատուի մասնագետների կողմից տրված եզրակացության համաձայն հնարավոր չէ՝ առանց հիվանդի առողջությանը վնաս հասցնելու:

Բողոքաբերը հայտնել է, որ Աճուրդի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով թաղանթի նյութի «polysulfone» սահմանված լինելը խտրական է և տեխնիկական բնութագիրն այդ մասով պետք է պարունակի միայն նյութը՝ սինթետիկ:

Այս տեսանկյունից գտնում են, որ թաղանթի նյութի «Polysulfone» նշելը չի կարող դիտարկվել որպես խտրական և սահմանափակել հնարավոր մասնակիցների մասնակցությունը, քանի որ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սույն նյութը օգտագործվում է գնման առարկա հանդիսացող դիալիզի գտիչներ արտադրող մի շարք ընկերությունների կողմից: Դրա հետ մեկտեղ այն նշված պահանջի սահմանումը չի խախտում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջները:

Բողոքաբերը հայտնել է, որ Տեխնիկական բնութագրում նշված մանրէագերծման «INLINE» տերմինը հանդիսանում է միայն «Fresenius Medical Care GmbH» կողմից կիրառվող տերմին՝ ավտոկլավի միջոցով դիալիզատորների մանրէագերծման մեթոդը նկարագրելու համար և մանրէագերծման մեթոդի վերաբերյալ տեխնիկական բնութագրում պետք է նախատեսվեր և՛ ավտոկլավով և՛ ռադիացիոն եղանակով, որով հնարավորություն կընձեռվի առավել ընդլայնել մրցակիցների շրջանակը:

Այս տեսանկյունից անհրաժեշտ է նշել, որ դիալիզի գտիչներ արտադրող մի շարք ընկերությունների պաշտոնական էջերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջիններիս կողմից օգտագործվում է մանրէագերծման շոգով այսպես կոչված «HEAT» (այդ թվում՝ նաև բողոքաբերի կողմից վկայակոչված «Fresenius Medical Care GmbH» կողմից) մեթոդը, ուստի անհրաժեշտ է նկատի ունենալ, տեխնիկական բնութագրում մանրէագերծման մեթոդը նշելը չի կարող դիտարկվել որպես խտրական պահանջ, քանի որ գնման առարկայի հատկանիշները պետք է հնարավորինս ներառեն ձեռք բերվող ապրանքի հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը, որը բխում է պատվիրատուի գնման պահանջից: Միևնույն ժամանակ, տեխնիկական բնութագրում պետք է նախատեսվի մանրէագերծման ընդհանուր մեթոդը՝ առանց հղում կատարելու կոնկրետ տերմինների, որոնք օգտագործվում են միայն այս կամ այն արտադրողի կողմից: Ինչ վերաբերում է բողոքաբերի պնդմանը, որ տեխնիկական բնութագրում պետք է նախատեսվեր և՛ ավտոկլավով և՛ ռադիացիոն եղանակով մանրէագերծման մեթոդը, քանի որ դրանք համարժեք են, ապա այս տեսանկյունից գտնում են, որ բողոքաբերի կողմից նշված փաստը բավարար չի հիմնավորվել: Դրա հետ մեկտեղ մանրէագերծման մեթոդի նախատեսված լինելը չի հակասում Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասին:

Նույնը վերաբերում է նաև Աճուրդի 5-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված «մանրէագերծման մեթոդը բետա-մանրէագերծում, արագացված էլեկտրոններով մանրէագերծում (e-beam)» պահանջին, քանի որ բետա-մանրէագերծման մեթոդը մանրէագերծման տարածված մեթոդներից է, կիրառվում է տարբեր արտադրողների կողմից և սույն պահանջի նախատեսումը չի հակասում Օրենքի 13-րդ հոդվածին և չի խախտում գնումների գործընթացի սկզբունքները:

Դրա հետ մեկտեղ գնումների և գնումների գործընթացի իրականացման կարևորագույն սկզբունքներից է հանդիսանում գնման արդյունավետ և օգտավետ իրականացումը, հետևաբար պատվիրատուի կողմից իրականացվող գնումը պետք է լիարժեք համապատասխանի վերջինիս գնման պահանջին և ապահովվի պատվիրատուի այն կարիքի բավարարումը, որի նպատակով կազմակերպվել է նշված գնումը և միևնույն ժամանակ չհակասի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 13-րդ հոդվածների պահանջներին:

Ուսումնասիրելով Աճուրդի վիճարկվող չափաբաժինների տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև հաշվի առնելով «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված առաջարկները տեխնիկական բնութագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ, գտնում եմ, որ նշված փոփոխությունների իրականացման պայմաններում Աճուրդի 1-ին, 2-րդ և 5-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը կհամարվեն Օրենքի պահանջներին համապատասխանող:

Այսպիսով հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ Աշոտ Բաբիկի Հովհաննիսյանի բողոքը ենթակա է մասնակի բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

Աշոտ Բաբիկի Հովհաննիսյանի կողմից 07.02.2019թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի. պարտավորեցնել «ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ-19/17» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին՝

1. Փոփոխել տեխնիկական բնութագիրը և սույն որոշման մեջ նշված հիմնավորումների շրջանակներում համապատասխանեցնել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին:
2. Աշոտ Բաբիկի Հովհաննիսյանի բողոքը պահանջի 2-րդ, 3-րդ, 7-րդ, 8-րդ և 12-րդ կետերի մասով մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված  
բողոքներ քննող անձ՝**



**ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**